

Ս. ԳՐԻԳՈՐ ՀԱՅԿԱԶՆ ՅԱՐԵՒՄՈՒՏՍ

Ս. Գրիգոր թէպէտ և ծնեալ էր 'ի Հայս, 'ի տասներորդ զարու, այլ Գաղղիա եղաւ իր չքնաղ գործոց գլխաւոր հանդիսատեղին: Իր վարուց պատմած թիւնը շարագրող ժամանակակից անանուն գրիչն՝ չաւանդեր մեղ ծնողաց անունները, այլ միսյն անոնց բարեպաշտութիւնը, և թէ ինչպէս փոյթ ունեցան իրենց որդւոց ընտիր դաստիարակութեան: Երբ Գրիգոր հասակաւ զարգացաւ՝ յանձնեցին զինքն երևելի վարժապետաց, յորոց ուսաւ սուրբ Գրոց զիտութիւնը և քրիստոնէական կրօնից զլիսաւոր խորհուրդները:

Իւր դաստիարակին իրեն քիչ ժամանակի մէջ ըրած մեծ աքայլ յառաջազիմութեան վրայ զարմացան. որովհետեւ զին և նոր կտակարանաց թէ վարդապետական և թէ բարոյական դիտութեան մէջ այնքան խորը թափանցեց, որ բոլոր վարդապետները գերազանցեց: Միշտ ջանաց բարեպաշտութեան և առաքինութեան պարագերը նախամեծար համարել քան զիմաստութիւն և քան զայլ մարդկային հրահանգս: Յանահական ախոց՝ սիրող էր մեծ ապէս սրբութեան սրտի, և ատելի էր նմա ստութիւն: Իր վրայ փայլեալ զլիսաւոր առաքինութիւնքն էին խոնարհութիւն, և եղբայրսիրութիւն, քաղցրութիւն, սէր սրբութեան և մեծ գութ առ աղքատա:

Ս. Գրիգորի ծնողքն որովշետեւ կանխահաս մահուամբ յաշխարհէ փոխեցան, իրեն առջև գժուարութիւն չզբանելով, և փափաքելով միայն երկնից բարութեանց, հրաժարեցաւ յամենայն ստացուածոց, և ինչ որ ծնողաց մահուամբն ըստ օրինի իրեն կը պատկանէր՝ բաժնեց կարօտելոց, և ինքն թողով հայրենական երկիրը դնաց ապրելու 'ի միայնութեան 'ի հեռաւոր աշխարհս: Նախ մտաւ վանք մը մերձ 'ի

Նուկեսարիա, Առաջին Հայոց եպիսկոպոսական աթոռը՝ և երբեմն ընդ իշխանութեամբ Աբրամաֆոյ: Գրիգոր տեսնելով հօն տեղի անձանց ունեցած եռանդը, անոնց նմանող եղաւ, և գերազանցեց իսկ զանոնք 'ի գործադրութեան ամենայն առաքինութեանց:

Ս. Գրիգորի վրայ այսպիսի մեծ եռանդ տեսնելով, մանաւանդ անոնք՝ որք զինքը աւելի մօտանց կը գիտէին, ամեննեն տարակոյս շնչնեցան որ յերկնից յատուկ չնորհք մ'ընդունած էր առ այն: Նիկոպօլիսի եպիսկոպոսն՝ լսելով զայն ամենայն, իմացաւ իր արժանաւորութիւնը և ընդունակութիւնը, և քովը կանչեց զինքը. Իրեն մոների՛ և ընտանի խորհրդական ըրաւ. Եկեղեցական պաշտամունք տուաւ, և վերջապէս բարձրացոյց 'ի սուրբ աստիճանան քահանայութեան, գուշակելով անոր աւելի բարձր աստիճանաց համելու արժանաւորութիւնը:

Գրիգոր զինքն եկեղեցւոյ հնձոց անդին մէջ մտցընող հովուին փափաքանոց համապատասխանելով՝ նոր եռանդեամբ սկսաւ մաքրել Աստուծոյ կալը, և պատերազմել ընդգէմ մանիքեցուոց, զինդիմամարտա հաշտեցընել, զայրիս և զրոբս պաշտպանել ընդգէմ հարըստահարուղ բռնաւորաց, և մաքասիլ աւելորդապաշտութեանց գէմ:

Եատ յորդորելու կարօտ չեղան ժողովուրդն և եկեղեցական նիկոպօլիսոյ բարեպաշտ հայրապետին մահուանէն յետոյ գրիգոր եպիսկոպոսական գահը բարձրացընելու: Զկրցաւ ազտամիլ այս աստիճանն ընդունելէ, թէպէտ և ինքզինքն անարժան կը համարէր, սակայն չուզելով Աստուծոյ կարգադրութեանց գէմ զնել, զոր յայտնապէս կը տեսնէր ժողովրդեան միաձայն հաւանութեան մէջ, յանձն առաւ մտադիր այս ծանր պաշտօնն, և այնպիսի ար-

թուն եռանդեամբ կատարեց, որ ժողովրդեան յոցը արդիւնաւորեց, իրեն յանձնեալ հօտին թէ հոգեոր և թէ մարմնաւոր ամենայն պէտքը կը հոգար. այնպէս որ յամենայնի յայտնապէս կ'երսէր թէ Աստուծոյ ընտրեալն է՝ յառաջնորդութիւն եկեղեցւոյն։

Սակայն թէպէտ և սուրբ Հովուա. պեսա չէր կրնար տարակուսիլ որ իր ընտրութիւնն յառաջնորդութիւն հօտին կանոնական և ասսուածահաճոյ էր, այսու հանդերձ յաճախ կը մոտա. ծէր քաշուիլ յառանձնութիւն, և այնու խուսափելի գովովթեանց, և հրա. ժարել յեպիսկոպոսական պատուոյն։ Աւսափ թողլով իր նուիրական պաշտօ. նը, յոր ընդդէմ իր կամաց բարձրա. ցած էր, 'ի ինդիր ելաւ անծանօթ աշխարհաց։

Եածուկ յուղի անկաւ. և երկու յոյն կրօնաւորաց հետ, որբ իրեն ընկերա. ցած էին՝ անցաւ յԱրեմուտս, և իտա. լիոյ և Գաղղիոյ մաս մը շրջելէն յետոյ, դադարեցաւ թիգիւիէ կամ թիւիէ քա. զաքին քով ՚ի Պոռ գաւառոի, Յոռէանու. թեմին մէջ։ Խմացաւ որ անկէ գրեթէ մընի մը չափ հեռու փոքրիկ եկեղեցիք մի կար նուիրեալ յանուն Ս. Մարտի. նոսի Վերդուացւոյ, և զոր կը կոչէին Ս. Մարտինոս միայնակեաց։ Համա. րելով որ այս տեղս է՝ որում ինքն այնչափ երկայն ժամանակէ ՚ի վեր կը ցանկար, որոշեց հոն հաստատել բնա. կութիւնը, և անդ կենաց մնացած մա. սը կ'փել։

Այսիր որոշումն ապահովագոյն կեր. պով գլուխ հանելու համար՝ տեղելոյն դշխային, որ Լուիզ կը կոչուէր, և եր մայր Ողորիկ Յոռէանու եպիսկոպոսին, հրաման խնդրեց հոն հաստատուելու, զոր և դիւրաւ իսկ ընդունեցաւ. որովհե. տեւ զշխային արդէն ծանօթ էին բարե. կրօն միայնակեցին մեծ արժանաւորու. թիւնքն։ Հոն իր հասակին բարձրու. թեան և երկայնութեան համեմատ տե. ղի մի շինեց, և ուր յաւիտենական ճշմարտութեանց խորհրդածութեամբ զբաղելով, ինքինքը խստակրօն վա.

րուց վարժեցուց, զարմանք լինելով բո. վանդակ Արեմութեաց։ Արգարեն չէր կրնար ծածուկ մնալ Սուրբն, զոր աստուածային նախախ. նամութիւնն առաջնորդած էր անդ շա. հի պէս փայլելով շատ մարդիկ լուսա. որելու, թէ իր կենաց խստակերու. թեամբ, և թէ տուած խորհրդոց քաղ. ցրութեամբ այն բազմութեան՝ որբ ա. մէն կողմանէ առ ինքն կը դիմէին։

Գրիգորի համբան այնքան տարա. ծուեցաւ, որ ոչ միայն շրջակայ ժողո. վուրդը, այլ և հեռաւոր տեղերէ կու. դային զարմանալու և լսելու այս նո. րահրաշ քարոզչին պատգամները. և իւրաքանչիւր ոք փոքրիկ ընծաներ կը բերէին՝ պատկանաւոր իրեն վիճակին։ Զբարերարս չորսուցընելու և ողոր. մութեան արդիւնքէն զանոնիք զրկելու. համար՝ իրեն արուածները կ'ընդունէր, զորս յետոյ կը բաժնէր աղքատաց։ Զգն միայնակեացն տեսնելով որ ոչ միայն հասարակ ժողովուրդն կու գայ զինքը այցելելու և լսելու զբանն Աստու. ծոյ, այլ նաև եկեղեցականք և քահա. նայք, յարմար համարեցաւ անոնց գա. լուսոը ոգոսակար ընել ՚ի պատիւ և ՚ի փասու Տեառն։ Սիրալիր ընդունելու. թիւն կ'ընէր անոնց, կը յարգէր, կը պատուէր, և իր հիւղին քով անոնց թե. թեաճաշ ալ պատրաստել կու տար այն կերակրովք՝ զորս հաւասացեալք իրեն կը բերէին, և ասով անոնց մարմնական պիտոյքը կը հոգար, որպէս զի կարե. նայ հաղորդ ընել գերբնական նորհաց և երկնային լուսոյն, զոր իր աղօթից ժամանակ երկինք իրեն կը զօգէին։

Այս առթիւ նշանաւոր գիպուած մի պատահեցաւ. մեծատուն մի՛ որ եկած էր զԱյուրբեն տեսնելու, ուրիշներու նման հրաւիրուելով քիչ մը կերակրով զօ. րանալու յանապատին, և անարգանոք մերժելով, տուն հասնելէն քիչ յետոյ գիււահարեցաւ, և այնպէս այլայլութիւն եկաւ վրան, որ կ'ուզէր ինքինքը զե. ար նետել։ Սուրբ միայնակեաց երբ եղածն իմացաւ, աղալեց զԱյստուած անոր առողջութեան համար, և ստի.

պեց զդեն մարմէն ելնելու. հիւանդն ազատեցաւ բոլորովին, ամենայն խո-նարհութեամբ իր յանցանաց թողութիւն խնդրելով.

Այսպէս Սուրբն Գրիգոր եօմը տարի բնակեցաւ այն պղտիկ այրին մէջ, զոր իր սրբավոյրն ընտրած էր, կրթերով ինքինքն յամենայն առաքինութիւնս, որով հասաւ կատարելութեան բարձրագոյն կէտին, միացընելով առանձնական կենաց կրթութիւնները ընդ կրթութիւնս մեծանուն առաքելագործ սրբոց և եռանդուն քարոզչաց Ռւստի իր այսպան արդեանց փոխարէն՝ Աստուած զինքը երանական փառաց վայելիք վարձատրել ուզելով, երշանիկ մահուամբ փոխադրեց զինքն յերկինս, Մահուան տարւոյն ստոյդ թուականն չի գիտուիր, այլ մետասաներորդ գարուն սկիզբները հանդիպած է, մարտի 16ին.

Դժուարին է շրջակայ և հեռաւոր ժողովրեան ցաւը բացարել, իրենք զիրինք զրկեալ աեսներով այսպիսի անձէ: Որչափ որ Սուրբն կենդանութեան ժամանակ ջանացած էր ծածուկ մնալ, այնչափ ալ երկինքը յեա մահուանն հրաշակեց արդիւնքը և սրբութիւնը: Իր նուրբական մարմինը գերեզմանէն՝ իր պղտիկ հիւղէն՝ ուր առանձնացած էր, մեծ հանդիսով և բազմամբու ժողովը գեան օրհներգութեամբ՝ փոխադրեցին յեկեղեցին Ա. Մարտինոսի, և աւագ խորանին առջնութիւն ամփոփեցին: Այլ Բիուղիէի իշխանուհին, զոր վերը յիշեցինք, լաւ ճանաշելով այն գանձին արձէքն, սուրբ մարմինը նայն քաղաքը բերելու ետևէ եղաւ, մեծ փառաք հանգչեցրած զայն Ա. Սոզումնին եկեղեցւոյն մէջ, ուր գեռ բազմաթիւ պանչելեգ կը փառաւորուի:

Օռէանու Եկեղեցւոյն Արքոց վարուց մէջ, ուր Ա. Գրիգորի տօնը՝ 26 մարտի կրկին անգամ նշանակուած է, կը

կարդանք որ Արքոյն մարմինը մինչև ցայսօր բիդիւիէ Ա. Սոզումնին եկեղեցւոյն մէջ կը հանգչի:

Այս սուրբ անապատականին սրբութեան համբաւն մինչև իր հայրենիքն հասնելով՝ ՚ի Հայս, ազգականքն կարծելով մէջ կրնան տակաւին զինքը իողջ գտնել, ուրիշ բազմաց հետ եկան առնա իրմէ փրկութեան ըստ ինդրելու. այլ համենելով երբ իմացան թէ վախճանած է ամենամեծ եղաւ սրտերնուն ցաւն: Սակայն իրենց այս ուղևորութիւնն անօգուտ չեղաւ, որովհետեւ բարեպաշտ մերձաւորքն ծանուցին իր Արքեմութք ճանապարհորդելին առաջ անցուցած կինաց հանգամանիքները: Իսկ անկէ ետքը հանդիպսածներն՝ զորս յիշեցինք, ըստ մեծնայնի վաւերական են, վասն զի մեղ աւանդող անանուն հեղինակն կ'ապահովէ, որ մեծաւ մասմի ականատես եղած է անոնց, մասմալ իմացած այն անձերէ՝ որք նոյն ժամանակ իրեն հետ ընտանեբար կը վարուէին, և որոց ճշմարտութիւնը լըսած էին ազգականաց բերնէն, անոնց Հայաստանէն՝ ՚ի Գաղղիա եկած ատեն:

Այսպէս ուրբէմն Նախարինամութեան ձեռքն ոչ միայն զհայկական անունն և համբաւն հոչակած է բովանդակ աշխարհի մէջ գաղթականութեան ձեռքով՝ արուեստից և ճարպիկ գործունէութիւն մասին, այլ և ուզած է նըւիրական և պաշտելի գործել զայն օտար ազգաց առջն, սրբութեան և գերբնական վարուց հայկական օրինակներ ընծայելով: Այսպէս բաց ՚ի յօդուածոյս նիւթե եղող զիւցազնէն, և ՚ի Ա. Սիմէռվիէ՝ որոյ գործերն բազմավիպիս նախընթաց Պրակին մէջ ծանուցինք, կը գտնուին նաև ուրիշ ազգային սուրբեր յԱրեմուտու, յորս նշանաւոր է և Ա. Փիդենտիոս ՚ի Պատաւին՝ յիտալիա, որոյ վրայօք ուրիշ անգամ՝ գարձեալ առիթ կ'ունենանք զրելու: